ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԵՂՐԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍԵԱՆ ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌԴ

Սիրելի Սրբազան,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր սէրը, օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Աստուծոյ ողորմած կամքով շուրջ քառորդ դար առաջ Դուք ձեռնադրուեցիք կուսակրօն քահանայ՝ Միածնի Իջման Սուրբ սեղանի առջեւ ծնրադիր հոգով ուխտելով անսակարկ ծառայել Աստծուն, մեր Սուրբ Եկեղեցուն եւ հաւատաւոր մեր ժողովրդին:

Երջանկայիշատակ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեամբ հովուական Ձեր սպասաւորութիւնը սկսեցիք ՌԴ հիւսիսային մայրաքաղաք Սանկտ Պետերբուրգում, որտեղ տեւական ժամանակ դադար էին առել հայ ազգային ու հոգեւոր կեանքի փառաւոր աւանդոյթները: Քայլ առ քայլ յաղթահարելով խորհրդային տարիներին բնորոշ բոլոր դժուարութիւնները՝ Դուք կարողացաք վերաբացել եւ բարեզարդել Սուրբ Յարութիւն եւ Սուրբ Կատարինէ եկեղեցիները, հայ համայնքին վերադարձնել դարերի ընթացքին մեր հայրերի կողմից ստեղծուած պատմական շինութիւնները: Նուիրեալ ծառայագործութեամբ մեր Եկեղեցու հովանու ներքոյ հաստատեցիք երիտասարդաց եւ մշակութային միութիւններ, Կիրակնօրեայ դպրոց, երկլեզու ամսաթերթ, համայնքային այլ կառոյցներ՝ սկիզբ դնելով Սանկտ Պետերբուրգում հայ կեանքի վերազարթօնքի: Հովուապետական Մեր այցերի ընթացքին գոհունակութեամբ ականատես ենք եղել Ձեր գործունէութեան բարի արդիւնքներին եւ Ձեր հանդէպ հայորդեաց սիրուն ու վստահութեանը, որը լաւագոյն վկայութիւնն է Ձեր նախանձախնդիր ծառայութեան:

Բարձր գնահատելով Ձեր ամբողջանուէր ծառայութիւնը՝ Մենք Ձեզ կոչեցիք Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի Առաջնորդի պատասխանատու պաշտօնին՝ Ձեր փորձառութիւնը ի սպաս բերելու թեմի առջեւ ծառացած խնդիրների լուծմանը: Այսօր ուրախ ենք հաստատելու, որ Ձեր բարեխնամ առաջնորդութեամբ օրաւուր զօրանում է Տիրախնամ թեմը, եւ արձանագրուող նորանոր յաջողութիւնները առաւել շէն ու պայծառ են դարձնում ռուսաստանաբնակ Մեր զաւակների հոգեւոր ու ազգային կեանքը:

Յատկապէս գովաբժան է նուիրեալ հոգեւորականիդ վաստակը Տիրախնամ թեմի առաջնորդանիստ եկեղեցու կառուցման գործում: Տիրոջ ապաւինութեամբ Դուք տարիներ շարունակ ի սպաս բերեցիք Ձեր անհուազ ջանքերն ու կարողութիւնները եւ Ձեզ գործակից եկեղեցասէր հայորդեաց հետ ի կատար ածեցիք եկեղեցու կառուցման աստուածահաճոյ նախաձեռնութիւնը՝ լուսաւոր նոր հանգրուան ամրագրելով թեմի երկարամեայ պատմութեան մէջ: Շքեղակառոյց համալիրը սերնդէ սերունդ պիտի վկայի Ձեր բարի ու արդիւնաւոր սպասաւորութեան եւ Ձեր հօտի հաւատքի արթնութեան մասին:

Միրելի Սրբազան, առանձնակի գոհունակութեամբ ենք անդրադառնում, որ ծառայութեան ողջ ընթացքին Դուք դրսեւորել էք Ձեր հոգու անսակարկ սէրն ու նուիրումը հանդէպ Սուրբ Էջմիածինը եւ միշտ ձգտել Ձեր գործերով ու նախաձեռնութիւններով աւանդ բերել Քրիստոսահիմն մեր Մայր Աթոռի յաւէտ պայծառութեանը: Այսօր Ձեր քաջալերութեամբ Ձեր թեմի բազմաթիւ հայորդիներ իրենց յանձնառութիւններով աջակից են Սուրբ Էջմիածնի առաքելութեանը՝ ի փառս Աստուծոյ եւ ի բարօրութիւն հաւատաւոր մեր ժողովրդի:

Բարձր գնահատելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում տարիների Ձեր վաստակը եւ նուիրեալ ծառայութիւնը՝ Հայրապետական այսու Կոնդակով Սուրբ Պայծառակերպութիւն առաջնորդանիստ եկեղեցու օծման բերկրալի առիթով շնորհում ենք Ձեզ

ԱՐՔՈՒԹԵԱՆ ՊԱՏԻՒ

Ի խորոց սրտի աղօթում եւ մաղթում ենք, որ Բարին Աստուած Ամենախնամ Իր Սուրբ Աջով պահի ու պահպանի Ձեզ եւ զօրակից լինի պատասխանատու Ձեր կոչման մէջ՝ պարգեւելով քաջառողջութիւն եւ զորոց յաջողութիւններ՝ ի շինութիւն Տիրախնամ Ձեր թեմի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 799